



GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Հեռ.՝ 818-241-3111, Լեդք./հսր.՝ 1208 • Ֆաքս՝ 818-543-0716

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱԼ
ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ**

2020թ. օգոստոս,

Հարգելի ծնող,

Դասերը սկսվելու առաջին մի քանի շաբաթվա ընթացքում ձեր երեխան համակարգչով կամ պլանշետով տանը NWEA®-ի կողմից մշակված MAP® Growth™ թեստը կհանձնի: MAP Growth թեստի միավորներն օգնում են ուսուցիչներին ստուգել աշակերտների կատարողականությունը՝ չափորոշելու ձեռքբերումներն ու աճը: Ուսուցիչներն արդյունքներն օգտագործում են մատուցվող դասերը համապատասխանեցնելու և աշակերտների համար նպատակներ դնելու նպատակով:

MAP Growth թեստերը եզակի են, և այն համապատասխանեցվում է ձեր երեխայի պատասխաններին՝ երեխայի հմտության մակարդակը չափորոշելու համար: Եթե ձեր երեխան ճիշտ է պատասխանում մի հարցի, ապա հաջորդ հարցն ավելի բարդ է: Եթե նրանք սխալ են պատասխանում, հաջորդ հարցն ավելի հեշտ է: Այս արդյունքները կապահովեն ավելի ամբողջական պատկերացում այն մասին, թե ձեր երեխան ինչ գիտի և ինչ է պատրաստ սովորելու:

Քանի որ MAP Growth թեստերն անմիջական և ճշգրիտ տեղեկություն են ապահովում ձեր երեխայի ուսուցման վերաբերյալ, ուսուցիչները համար հեշտ է միևնույն միավորներ ունեցող աշակերտներին կապակցել, ովքեր, ընդհանուր առմամբ, պատրաստ են նմանատիպ հմտությունների և թեմաների ուսուցման, և ապա նրանց ուսուցումը համապատասխանաբար ծրագրել:

Շատ կարևոր է, որպեսզի այս թեստերի ժամանակ աշակերտները լավագույնս դրսևորվեն՝ առանց որևէ այլ անձի, համացանցի կամ այլ աղբյուրների օգնության: Ձեր երեխայի ուսուցիչն իսկապես պետք է հասկանա, թե յուրաքանչյուր աշակերտ ինչ կարող է անել, և ինչու նրանք աջակցության կարիք ունեն: MAP Growth թեստերը հանձնելիս՝ խնդրում ենք օգնել ձեր երեխային՝ տրամադրելով թեստ հանձնելուն համապատասխան միջավայր՝ գերծ շեղումներից կամ աջակցությունից:

MAP Growth-ի զեկույցները պարունակում են նաև գիտելիքների աճին բնորոշ տվյալներ այն աշակերտների համար, ովքեր գտնվում են նույն դասարանում, սովորում են նույն առարկան և ունեն կատարողականության նույն մակարդակը: 6-12-րդ դասարանների աշակերտները MAP Growth թեստը կհանձնեն ընթերցանությունից, իսկ 6-8-րդ դասարանների աշակերտները MAP Growth թեստը կհանձնեն մաթեմատիկայից: Յուրաքանչյուր թեստը հանձնելուց հետո դուք Ընտանեկան զեկույց կստանաք, որտեղ կներկայացվի ամփոփ նկարագրություն, թե ինչպիսին է ձեր երեխայի ուսումնական կատարողականությունը:

Մենք իսկապես ոգևորված ենք կենտրոնանալու ձեր երեխայի գիտելիքների անհատական աճի և նվաճումների վրա: MAP Growth-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք NWEA.org/familytoolkit

Հարգանքներով՝

Dr. Chris Coulter
Ուսուցման և ուսումնառության բաժնի ղեկավար